

# ՀՀ ԳԱԱ-ի ձեռք բերած սարքի շնորհիվ քիմիական գիտությունը Հայաստանում կրարձրանա նոր մակարդակի

Սույն թվականի հունիսի 25-ին ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում տեղի ունեցավ միջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրի բացման արարողությունը: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Չարությունյանը և ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Քիմիկոսները նախարար Արայիկ Չարությունյանին և Ռադիկ Մարտիրոսյանին ներկայացրին նոր սարքի ընծեռած հնարավորությունները գիտական ուսումնասիրությունների կատարման գործում: Այն թույլ կտա քիմիական գիտությունը Հայաստանում բարձրացնել նոր մակարդակի, և մեր գիտնականները հնարավորություն կստանան արդի սարքավորման միջոցով գիտական ուսումնասիրություններ իրականացնելու և իրենց հետազոտությունների արդյունքները գիտական հոդվածների միջոցով ներկայացնելու միջազգային գիտական հանրությանը, ինչը մինչ այս անհնար էր սարքավորումների ավելի թույլ հնարավորությունների պատճառով:

«Այն նախատեսված է սինթեզվող նյու-



թի ուսումնասիրման և բացահայտման համար: Այս համակարգի օգնությամբ Հայաստանում կգարգանան նյութաբանության նոր ուղղություններ», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Նախարար Արայիկ Չարությունյանը հետաքրքրվեց սարքի կիրառական նշանակությամբ:

Ռադիկ Մարտիրոսյանն ասաց. «Այսօր շուկան այնպիսին է, որ պետք է անընդ-

հատ նոր դեղամիջոցներ ստեղծվեն: Նոր դեղը նշանակում է նոր նյութ, նոր նյութի կառուցվածք նոր ատոմներով: Այդ ատոմները ճանաչողն այս սարքն է: Ամբողջությամբ սա հնարավորություն է տալիս նյութի կառուցվածքը որոշել»:

Նշվեց, որ սարքի կիրառական նշանակությունը մեծ է դեղերի սերտիֆիկացման, կոնյակի և զինու սերտիֆիկացման գործում:

700 հազար դոլար արժողությամբ մի-

ջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրը ՀՀ ԳԱԱ-ն ձեռք է բերել պետության կողմից հատկացված գումարներից երկար տարիների ընթացքում տնտեսված միջոցների հաշվին: Այս կապակցությամբ Ռադիկ Մարտիրոսյանը հատուկ շնորհակալություն հայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ ասելով. «Բոլորին միշտ ասել եմ, որ ավելի լավ է մեր գումարները պահենք, հետո զենք մի կարգին սարքավորում, քան թույլ հնարավորությամբ մի փոքր բան: Բայց բախվեցինք մեր ֆինանսական օրենքների արգելքին, որ պետք է տնտեսած գումարը վերադարձնենք պետական բյուջե: Ի պատիվ պարոն Փաշինյանի, նա թույլատրեց, որ տնտեսած այդ գումարներն օգտագործենք այս նպատակի համար»:

Այս սարքից օգտվելու են Հայաստանի 18-ից ավելի գիտատեխնիկական կազմակերպությունները, ՀՀ ԳԱԱ համակարգի և բուհերի համապատասխան լաբորատորիաների աշխատակիցները, երիտասարդ գիտնականները:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**